

Սեդա Գալստյան
Հայաստանի պատմության թանգարան
sedagalstyan@yahoo.com

ՈՐՈՇ ՆՈՐԱՅԱՅՏ ԴՐՎԱԳՆԵՐ ՀՈԿՅԱՆՆԵՍ ՔԱՁԱՁՆՈՒՄՆԻ ԿՅԱՆՔԻՑ (ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՆԱՄԱԿՆԵՐԻ)*

Հիմնաբառեր. Հովհաննես Քաջագունի, արխիվ, նամակ, Սաթենիկ Միրինյան-յան, գրող, ճարտարապետ, հասարակական գործիչ

Ներածություն

Խորհրդային իշխանության տարիներին հասկանալի պատճառներով Հայաստանի պատմության թանգարանում չէր ցուցադրվում Հայաստանի առաջին հանրապետության (1918–1920 թթ.) պատմության շրջանը: Շատ քիչ էին համապատասխան թանգարանային նյութերը տվյալ ժամանակահատվածն ամբողջացնելու համար: Անկախության տարիներին թանգարանի ֆոնդերը հարստացան նոր արխիվային նյութերով, որոնք նոր լույս սփռեցին Առաջին հանրապետության պատմության և նրա պետական այրերի գործունեության վրա: Դրանց թվում էր Առաջին հանրապետության առաջին վարչապետ Հ. Քաջագունու (Իգիթխանյանի) անձնական արխիվը, ում անունը խորհրդային պատմաշրջանում մոռացության էր մատնվել թե՛ որպես պետական-քաղաքական գործիչ և թե՛ որպես ճարտարապետ: Ձեռք բերվեցին որոշ արխիվներ՝ Ս. Թորոսյան (ՀՊԹ, նգպֆ, նո. 17536/1-22), որի ուսումնասիրությամբ հրապարակվեց առանձին գիրք (Գալստյան 2007): 1996 թ. ձեռք բերվեց պետական ու ռազմական գործիչ Նժդեհի արխիվը, որում ամփոփված են հայ ազգային հերոսի՝ Վլադիմիրի բանտում թողած վերջին մատյանները¹:

Երկար կարելի է թվարկել այս շարքը, սակայն կառանձնացնենք 1996 թ. թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ Հենրիկ Սարգսյանի ջանքերով Հ. Քաջագունու դստեր՝ Մարգո Քաջագունու և թոռնուհու՝ Լիլյա Քաջագունու միջոցով նվիրաբերված ՀՀ առաջին վարչապետի թանգարանային արժեք ներկայացնող արխիվը (ՀՊԹ, նգպֆ, նո. 17543/1-191): Այն հարուստ նյութ է պարունակում հանրապետության քաղաքական պատմության, պետականաշինության, երկրի սոցիալ-տնտեսության դրության, պետական այրերի և տարբեր դեպքերի ու իրադարձությունների մասին: Օգտագործելով դասակարգման մեթոդը, խմբավորել և

* Ստացվել է 26.07.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 23.08.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ.:

¹ Վազգեն Տեր-Հարությունյանը այդ հավաքածուն ի պահ է տվել ՀՊԹ-ին 1996 թ.:

համատեքստավորել ենք վարչապետի արխիվի փաստաթղթերը՝ գրությունները, նամակները: Մինևս ժամանակ համեմատական մեթոդով կարողացել ենք վերարտադրել Հ. Քաջագունու և աղջկա կողմից վերարտագրված որոշ գրություններ: Այստեղ տեղ են գտել Հ. Քաջագունու ինքնակենսագրականը, ինչպես նաև դատեր՝ Մարգոյի կողմից գրված կենսագրությունը մոտ 42 էջ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, կնոջը՝ Սաթենիկ Դավիթի Միրիմանյանին ուղղված անձնական, ընտանեկան, քաղաքական բնույթի նամակները, ինչպես նաև տարբեր լուսանկարներ, խմբանկարներ, Քաջագունու գործունեության տարբեր փուլերի մասին, հետաքրքիր դրվագներ, որոնք կատարվել են մինչ Առաջին հանրապետության շրջանը, և այդ ամենը բացահայտում ենք՝ օգտագործելով հետադարձ կապը նամակների միջոցով, ինչն էլ հիմք դարձավ մեր հոդվածի համար: Ուսումնասիրության ընթացքում որպես սկզբնաղբյուրներ օգտագործվել են Հ. Քաջագունու ընտանեկան գրությունները, որոնք անգնահատելի տեղեկատվական աղբյուր էին ժամանակաշրջանն էլ ավելի պարզ պատկերացնելու համար: Վարչապետի արխիվն ընդհանուր առմամբ կազմում է մոտ 1029 միավոր առարկա: Կարծում եմ այս ամենը հարուստ և կարևոր նյութ է Առաջին հանրապետության պատմության հանրահռչակման, համապատասխան սրահներում ցուցադրելու և հանրությանը ծանոթացնելու այդ շրջանի պատմության կարևոր անցքերին ու իրադարձություններին՝ Հ. Քաջագունու արխիվի միջոցով: Այդ նամակներում մեզ է ներկայանում հասարակական-քաղաքական գործիչը, փիլիսոփան, գրողը, ճարտարապետը, բարձր ճաշակի արվեստագետը: Ամբողջական պատկերը ներկայացնելու համար անհրաժեշտ է համախմբել ու մանրամասն ուսումնասիրել այն գրական ժառանգությունը, քննադատական հոդվածները, պատմվածքները, ճանապարհորդական նոթերը, որ թողել է նա, հանգամանորեն դիտարկել իրադարձությունների վերլուծությունները, որ կատարել է ծանր ժամանակահատվածներում, այն ճարտարապետական նախագծերը, որ արժանացել են մրցանակների: Նամակների մեծ մասի բնօրինակները պահպանվում են Գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ, Քաջագունու ֆոնդ, 4212): Օգտագործել ենք ծոռնուհու՝ մոսկվաբնակ Քսենյա Օդովայի բարեկամական կապը Մայքլ Բարայանի հետ, որոշ նամակների բովանդակությունների համեմատությունն իրականացնելիս: Ելնելով հոդվածի ծավալից և այն հանգամանքից, որ Հ. Քաջագունուին որպես քաղաքական գործիչ, որպես ՀՀ առաջին վարչապետ, քիչ թե շատ հայտնի է ընթերցողին (սակայն ապագայում կանդրադառնանք այդ փուլին ևս)՝ որոշեցինք իր նամակների միջոցով ներկայացնել նրա կյանքի այն փուլերը, որ մնացել են ստվերում, ավելի քիչ են հայտնի ընթերցողին. դա Հ. Քաջագունուի գրողն է՝ հայի ինքնության, ընտանեկան արժեքների կրողը, հասարակական գործիչը, քաղաքացիական ինժեները, ճարտարապետը, փիլիսոփան, արվեստագետը: Ճիշտ է, այդ նամակներին եղել են անդրադարձներ. Մ. Հարոյանը «Հովհաննես Քաջագունու նամակները հարազատներին» հոդվածում անդրադարձել է որոշ նամակների, հատկապես քաղաքական բնույթի, սակայն ոչ ամբողջական պատկերն է ներկայացված տպագրված նյութում: Մեր աշխատանքում փորձել ենք անդրադառնալ գործչի կյանքի այն փուլերին, որոնք մնացել են ստվերում և դնել գիտական շրջանառությամբ

յան մեջ: Նախապես նշեմ, որ փաստաթղթերը, նամակները բերված են արևելահայերեն ուղղագրությամբ՝ որոշներին կցելով բնօրինակները: Կան նաև անընթեռնելի կամ դժվարությամբ ընթերցվող նամակներ, որոշ նամակներ արտագրված են դասեր՝ Մարգոյի կողմից: Նամակների մեծ մասը ռուսերենով է (թարգմանությունը՝ հեղ. Ս. Գ.): Քաջազունու արխիվում կան մի քանի ինքնակենսագրականներ և աղջկա ձեռքով գրված կենսագրականներ: Վերոգրյալը հիմք ընդունելով՝ հարկ ենք համարում բուն շարադրանքը սկսել գործի ինքնակենսագրականով:

3. Քաջազունու ինքնակենսագրականը

Այս ոչ սովորական ինքնակենսագրությունը Հ. Քաջազունին գրել է Հովհաննես Թումանյանին ուղղված հուշերում: Հետագայում՝ 1936թ. պատճենը ուղարկվել է ՀՄԽՀ լուսժողկոմատի պատմության և գրականության ինստիտուտ, որին ի պատասխան այդ ժամանակվա տնօրեն Հ. Գյուլիքևիսյանը գրել է. «Հարգելի ընկ. Հ. Քաջազունի շնորհակալությամբ ստացանք Ձեր ինքնակենսագրությունը, որը պատմության և գրականության ինստիտուտի կողմից կօգտագործվի Հովհ. Թումանյանի հուշերի հատորում: Դիրեկտոր /Հ. Գյուլիքևիսյան/, Ակադ. հրատ. քարտուղար՝ Ն. Թումանյան /27.05.1936թ. (ՀՊԹ, նգպֆ, նո. 17543/5, ք/մ 177, 88):

Հ. Քաջազունու դուստրը՝ Մարգոն, վարչապետի արխիվը թանգարանին հանձնելիս խոստովանել է, որ որևէ տեղ չի պահպանվել սույն փաստաթղթի բնօրինակը, ինքը հանձնում է դրա պատճենը:

«Ծնվել եմ 1868թ. և մինչև այսօր դեռ չեմ մեռել, թեև մեռնելու համար ունեցել եմ բազմաթիվ ու խիստ բարենպաստ առիթներ, մի քիչ համատ ու հաստակող ծերուկ եմ ես: Միջնակարգ կրթությունը ստացել եմ Թիֆլիսի ռեալական դպրոցում, բարձրագույնը՝ քաղաքացիական ճարտարապետական ինստիտուտում: Թե մեկը, թե մյուսը հիշում եմ գարշանքով և գայրոյթով: Ցարական ռեժիմի (կարգ) քաղցրությունը ճաշակել եմ ամենից առաջ դպրոցների միջոցով և միակ լավ բանը, որ տվել են ինձ այդ դպրոցները՝ անհաշտ ատելությունն է եղել ամեն կարգի բռնության դեմ:

Շատ սիրել եմ գեղարվեստը ընդհանրապես և գեղարվեստական գրականությունը մասնավորապես: Միաժամանակ տարված եմ եղել հասարակական և քաղաքական խնդիրներով, ապա իբրև արևելքցի՝ հակված եմ եղել երազելու և փիլիսոփայելու: Է՛լ ասեմ, անբուժելի ռոմանտիկ եմ եղել և միաժամանակ շեշտված սկեպտիկ. հաշտեցրեք եթե կարող եք:

Իբրև ճարտարապետ՝ նախագծել եմ ու շինել, իբրև գրասեր՝ բավականին գրել եմ դեսից-դենից (հիմնականում ռուսերեն): Իբրև հասարակական-քաղաքական գործիչ՝ աշխատել եմ զանազան հաստատություններում և 30 տարի շարունակ անդամ եմ եղել ՀՀ դաշնակցության, իսկ 1918–20թթ. վարել եմ նաև պետական խիստ պատասխանատու պաշտոններ: Իբրև տնաբույս փիլիսոփա՝ շատ մտածել եմ անլուծելի խնդիրների մասին (քարեբախտաբար մարդկության համար, փիլիսոփայել եմ միայն մտքիս մեջ, լռելյայն, ինքս ինձ):

Ինչ է եղել իմ տաղանդների և հակումների այդպիսի բազմակողմանիության հետևանքը: Այն, որ ոչ մի ասպարեզում ոչինչ դրական չեմ տվել: Ճարտարապետին խանգարել է փիլիսոփան, գեղարվեստասերին՝ քաղաքական գործիչը և հակառակը:

Արել եմ շատ սխալներ, նրանց թվում նաև խոշոր, հետևանքներով ծանր սխալներ: Շատ բան եմ հասկացել, շատ բան չեմ կարողացել: Եթե ընդունակ լինեի զոջալու և ափսոսալու, հավանորեն այս տարիքի չէի հասնի և այսօր այս տողերը գրելու հաճույք չէի ունենա: Բայց զոջալու և ափսոսալու առաքինություններից ես զուրկ եմ ի բնե – ավելին, ես այդ մարզանքները համարում եմ միանգամայն պարապ բան: Ասում եմ եղել է, ուրեմն պիտի լիներ: Ֆաթալիզմ է, հարկավ: Մխիթարվում եմ սակայն նրանով, որ եթե ֆաթալիզմ բառի փոխարեն դենք դետերմինիզմ բառը, այնքան էլ տգեղ չի հնչի:

Բայց ինչ կապ ունի այս ամենը Հ. Թումանյանի ու նրա երկերի հետ: Ոչ մի կապ: Թումանյանին ես շատ եմ սիրել, երկար տարիներ «վայելել եմ» նրան, բայց իմ կյանքը գնացել է իր սեփական ճամբով և իմ մեղքերին մեղսակից չի եղել Օհաննեսը: Գուցե ես եմ ունեցել ազդեցություն Թումանյանի վրա: Այդ էլ չեմ կարծում կամ եթե եղել է՝ շատ աննշան չափով: Հիշում եմ օրինակ, որ մեր բարեկամության սկզբնական շրջանում ես դարձրել եմ Թումանյանի ուշադրությունը Պուշկինի վրա (շատ էր տարված Լեոնոնտովով և համարյա չէր ճանաչում Պուշկինին, նույնը և Շեքսպիրի վերաբերմամբ, որը մի տեսակ կրոնական պաշտամունքի առարկա էր ինձ համար): Ապա հիշում եմ, որ կարողացել էի համոզել Օհաննեսին, թե իր փոխադրած «Սասունցի Դավթի» ոճը մանրամասն պետք է փոխել և որ «դեպի անհունի» նման թեմաներ մշակելուց հրաժարվի: Գուցե եղել են սրա նման և ուրիշ դեպքեր: Բայց պարզ է, որ եթե ես էլ չլինեի, ամեն մի գրասեր մարդ նույնը կասեր Թումանյանին և վերջապես Թումանյանը այնքան զգայուն էր գեղեցիկի և գեղարվեստականության հանդեպ, որ ինքը գլխի կրնկներ առանց կողմնակի... նախազգուշացումների...: Մենք բարեկաններ էինք, բառիս ամենալայն իմաստով, ահա պարզ իրականություն: Ունեցել ենք աղմկալի վիճաբանություններ, պատահել է, որ հայհոյել ենք իրար, բայց երբեք ոչ մի օր ավելի քան 30 տարվա ընթացքում չենք դադարել անկեղծ ու սրտագին բարեկամ լինելուց: Իմ կենսագրության ամենալավ էջերից մեկն է Հ. Թումանյանի բարեկամությունը: Ահավասիկ իմ կենսագրությունը (ՀՊԹ, մմ 17543/5, ք/մ 321, ք/մ 177), կասկածում եմ, թե օգտագործելի լինի ձեզ համար: Բայց ունեցածս այս է միայն: Այս ամենի ապացույցը Հովհ. Թումանյանի այս երկտողը, երբ քառյակները նվիրել է Հ. Քաջագունուն մակագրելով՝ «Իմ Օհաննեսին իր Օհաննեսից» (ՀՊԹ, նգպֆ, մմ 17543/5, ք/մ 177-16) (1936թ. մայիս 27, Երևան-Երիվան):

Հենց այնպես չէ, որ հողվածը սկսում ենք Հ. Թումանյանին գրված հուշերում իր իսկ ինքնակենսագրականով, ինչը վկայությունն է Հ. Քաջագունու արժեհամակարգի, կյանքի, մոտեցումները մարդու հանդեպ, նրա մոտ բարձրության վրա է խոսքը, գործը և գրիչը: Այնքան անկեղծ է ամեն տողը՝ ինչ որ տեղ ինքնաքննադատական, որոշ տեղերում ինքնախոստովանանք, սակայն բարեկամաբար ու մեծ հարգանքով մեծ բանաստեղծի ու նրա հայացքների հանդեպ: Որպես գրող

կարևորում ենք որոշ դրվագներ, որ Հ. Քաջազունին կարողացել է սևեռել Հովհ. Թումանյանի ուշադրությունը այլ գրողների (Պուշկին, Շեքսպիր) ստեղծագործությունների վրա և օգնել նրան ավելի լայն, ընդգրկուն, խորությամբ հայացք նետել գրականության այդ աշխարհը: Հ. Քաջազունու դուստրը իր հոր ուսումնառության տարիների համար գրում է, որ 1882–1885 թթ. հայրը Թիֆլիսում «Նարոդնայա վոլյա» կազմակերպության անդամ էր, հիշեցնենք, որ այս կազմակերպությունը բաժանմունքներ ուներ 50 քաղաքներում, շուրջ 500 անդամներով: Եվ Հ. Քաջազունին կապը պահպանում էր ոմն Մեյնոնովի միջոցով: Ակամայից ծագում է այն ենթադրությունը, որ Խարկովում ուսանելու տարիներին նա ներկայացնում էր այդ կազմակերպությունը, որի հիմքը նրա մի օղակն էր: Անհասկանալի է, թե ինչու է նամակի վերջում ստորագրությունը դրված գերմաներենով, իսկ ամսաթիվը և մնացածը ռուսերենով: Աղջկա խոստովանությամբ հայրն այդ ժամանակ տիրապետում էր հայերենին, ռուսերենին, ինչ որ չափով ֆրանսերենին, բայց ոչ գերմաներենին: Հարց է առաջանում՝ ինչ կապ կար Թիֆլիսի և Խարկովի ազատագրական կազմակերպությունների միջև: Ինչ որ չափով բացատրությունը տրվում է հաջորդ նամակներում:

Հովհաննես Քաջազունին քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ուսանող, նրա գրական հակումները

Վերլուծենք Հ. Քաջազունու ուսանողական կյանքի որոշ դրվագներ, որոնք պարզ արտացոլված են Սաթենիկին՝ ապագա կնոջը գրված նամակներում: Այստեղ պարզ կդառնա, թե ինչու «ճարտարապետին խանգարել է փիլիսոփան, գեղարվեստատերին՝ քաղաքական գործիչը և հակառակը»: Այս նամակներում՝ (նամակները գրված են ռուսերեն և հայերեն, հիմնականում պահվում են թանգարանի նորագույն շրջանի ֆոնդում՝ մն 17543 համարի տակ) կա մեծ սեր, մտերմություն, բարկություն, խորհուրդ՝ նաև գրական հակումների պարզ դրսևորումներ: 1885 թ. հունիսի 20-ին Ալիսլավաքից Սաթենիկ Միրիմանովային գրված նամակում, ի դեպ Սաթենիկը գիմնազիայի աշակերտուհի էր, 16 տարեկան, իսկ Հ. Քաջազունին ավարտել էր Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, ստացել առաջին կարգի ատեստատ: Հ. Քաջազունին երիտասարդ տարիներին մասնակցում էր նարոդնիկական գաղտնի ուսանողական կազմակերպությանը, խորհուրդ է տալիս Սաթենիկին իր ընկերուհիներից կազմել 5–6 հոգանոց գրական խմբակ և ղեկավարել այդ խմբակը, ընդհուպ տալիս է գրականության այն ցանկը, որ պետք է ընթերցել: «Դուք կլինեք հասարակական գործի մեջ: Դուք կմասնակցեք բարեգործական միջոցառումներին, դուք կտեսնեք, թե ինչպես ազնիվ մարդիկ կարող են զոհաբերել «իրենց շահը» հանուն հանրության շահերի»: Խնդրում է պատասխան նամակը ստորագրել «Լյուսի Զարուդսկոյ» անվամբ (ՀՊԹ, նգպֆ, մն 17543/149): Կարելի է ենթադրել, որ խմբակի փորձը պետք է մտնի նարոդնիկական ճյուղավորված ցանցի մեջ: Իսկ արդեն Խարկովի տեխնոլոգիական ինստիտուտից Թիֆլիս հասցեագրած նամակում (1886 թ. նոյեմբեր) Սաթենիկին, նախորդ նամակին ի պատասխան հիշեցնում է, որ ինքը պատրաստ է լսել ճշմարտությունը, ինչքան էլ այն դառը լինի, խոսում է իր զգացմունքների մասին, անհանգստանում նրա լուրջ-

յամբ: Գրում է, որ որոշել է Հոմերոսը կարդալ բնագրով և կատարել թարգմանություններ, Բայրոնից թարգմանել է մի բանաստեղծություն: Հաջորդ նամակներում կարդում ենք. ցանկություն ունի ներկայացնել իր վիպակը Օրոլենսկուն՝ «Русское богатство»²-ի խմբագրին: Հետաքրքիր է, որ երբ նրա ստեղծագործությունը կարդացել են քննադատներ Միխայլովսկին և Ա. Շելլերը, միանշանակ հավանել են և խոստացել տպագրել «Новое обозрение»³ պարբերականում:

Բերված նամակների քաղվածքներից երևում է, որ Հ. Քաջագունին գրել է նաև պատմվածքներ՝ «Մեր քուտակը», «Յակովի գաղտնիքը» «Դեղձանիկը» և ուրիշներ (Новое обозрение – 1896–1897 թթ.) (ՀՊԹ, մմ 17543/97): 1896–97 թթ. նույն թերթի ամսագրային նշումներ բաժնում Հ. Քաջագունին հանդես է գալիս իր գրական-քննադատական հոդվածներով՝ հրապարակված հետևյալ համարներում՝ № 4443, 4448, 4452, 4457 և այլն: /1891 թ. 6-ը դեկտեմբերի/ նամակում նշում է, որ կա մի ասպարեզ՝ գրականությունը, որտեղ «ես կարող եմ օգտակար լինել իմ ժողովրդին, իմ սիրելի հայրենիքին, և գրականության նվիրյալի համեստ պսակը ինձ կբերի ավելի մեծ հարգանք ու պատիվ, քան բոլոր ցնորական գոռում գոչյունները» (ԳԱԹ, Քաջագունու ֆոնդ, նո. 4212): Ապա խոստովանում է, որ աննշան հատու բաներ է գրում, ավելի շուտ սովորում է, ուսումնասիրում գրիչը և գրելու տեխնիկան: Նամակներում պարզ երևում է նրա փիլիսոփայական միտքը, գրական հակումները՝ կարևորելով այդ ուղղությունը: 1887 թ. որոշ անթվակիր և թվակիր նամակներում, հորդում է անմնացորդ սերը Սաթենիկի հանդեպ, սիրում է նաև այն քաղաքը, որտեղ «Սաթենն» է, նրա թերությունները, գրում է սպասվող նշանադրության մասին: Իսկ հետագարձ հասցեն նշում է Խարկով, տեխնոլոգիական ինստիտուտ Արշակ Տեր-Ստեփանովին՝ փոխանցելու համար Հովհաննես Տեր-Հովհաննեսովին:

Հ. Քաջագունու նամակներից բերված որոշ մտքեր վկայում են նրա մտտեցման, դիրքորոշման մասին հայ ընտանիքի ամրությանը, նրա ավանդույթների պահպանությանը, ինչն արժանի է վերլուծության: Հավատացնում է, որ իր հարազատները «Սաթենին» սիրում են իրենց աղջկա պես, որովհետև ինքն է ներկայացրել նրան, որովհետև «Սաթենի» երջանկությունն իր երջանկությունն է: Երկուսի ծնողները պետք է խոսեն իրար հետ (1887 թ. 23 մայիս, դեռ ամուսնացած չեն): Առաջ ընկնելով նշենք, արդեն 1891 թ. դեկտեմբերի 1-ին Պետերբուրգից Ախալքալաք գրած նամակում, գնահատելով հայ ընտանիքի դերը, սիստ ու կացը, նա անտարբեր չէր կարող մնալ այն մտքից, թե ինչպես է «Սաթենը» իրեն զգում իրենց տանը՝ ծնողների ներկայությամբ, որպես սկեսրայր և սկեսուր է ընդունում, թե՛ որպես իր երկրորդ ծնողներ: Կարծում եմ, տանից հեռու գտնվող հայ երիտասարդի համար շատ խորն են այս մտքերը, ում համար թանկ է այն հարաբերությունները, որ հաստատվել է հայ ընտանիքում նոր անձի՝ տվյալ դեպքում «Սաթենի» մուտքով: Այդ է պատճառը, որ հաջորդ նամակում կարդում ենք, որ հույս ունի ունենալ փոքրիկ գրադարան իրենց տանը, կբերի նաև իր գրքերը: Գրում է, որ մայրիկը

² Русское богатство, հասարակական-քաղաքական, գրական և գիտական ամսագիր, հրատ. 1893–1911 Սանկտ-Պետերբուրգում:

³ Новое обозрение, ամենօրյա քաղաքական-հասարակական և գրական թերթ, Թիֆլիս, 1885–1906:

իրեն հատկացնի հատուկ ննջարան, բայց դա պետք է ասվի շատ նրբորեն, չվիրավորելով ծնողներին, առանց այն էլ նրանք պատրաստ են ամեն ինչ անել իրենց համար: Նորից բախվում ենք խորքային, արժեքները հարգող, կայուն մտածողության պարզ ապացույցին:

1887թ. օգոստոսի 26-ին Պետերբուրգից Թիֆլիս Սաթենիկին գրված նամակը իր կենսագրականի կարևոր փուլ է, ինչն ընտրեց քաղաքացիական ինժեների մասնագիտությունը: Գրում է, որ ընդունվել է ինստիտուտի քաղաքացիական ինժեներների բաժինը... որ ինքը ստիպված է եղել ընդունվել Պետերբուրգում, որովհետև մաքսային ինստիտուտը փակվում էր Ալեքսանդրիայում և մասնակցել է շինարարական և տեխնոլոգիական ինստիտուտների քննություններին: Շինարարական բաժնում 40 տեղի համար 140 թեկնածուներ էին: Նկարչությունը, որը համարվում էր բարդ քննություն, 80 հոգի կտրվել են, ինքը ստացել է 3.25 միավոր, հավատացած է, որ կընդունվի: Համոզված է կավարտի 1892թ... այնտեղից դուրս են գալիս շինարար ինժեներներ, շինարարներ, ճարտարապետներ և այլն: Լինելով բազմակողմանի ընդունակությունների տեր անձնավորություն՝ այս շրջանում նորից ակտիվանում են Հ. Քաջագունու գրական հակումները: Հատկապես կարևոր մանրամասներ են պարունակում 1888թ. օգոստոսի նամակները Պետերբուրգից: Նա գրում է, որ վերջացրել է քննությունները և ընդունվել 1-ին կուրս, հրաժարվել է 2-րդ կուրսի քննություններից, հորը հավատացրել, որ մնացել է 1-ին կուրսում: Նշում է, որ իր նպատակը շուտ ավարտելը չէ, այլ ունի մի անձնական երջանկություն, որ իր հետ լինի «Սաթենը» և ավելացնում է, որ իրեն ունենալու համար պետք էր հագնել «ուսանողական մունդիրը (համազգեստը)»: Կնոջը խորհուրդ է տալիս կարդալ Ուշինսկու գրքերը: Համոզում է Սաթենիկին սովորել հայոց լեզուն. «Հավատա, որ մեր լեզուն նույնքան գեղեցիկ է և այն անվիճելի առարկություն ունի, որ նա մերն է, մեր բնական լեզուն է»... հուսով է, որ շուտով նամակների պատասխանը կատանա հայերեն: Հաջորդ նամակում կարդում ենք Հ. Քաջագունու վրդովմունքը և արտահայտած մտքերը ազգի, ինքնության մասին. «Իմ համոզմամբ ազգությունից դուրս մարդկություն չկա: Ամենայն մարդ ամենից առաջ ազգի մը պիտի պատկանի, – ազգ չունեցող մարդը, ինչպես և կրոն չունեցողը այլևս մարդ չէ, հայերին, ավելի քան որևիցե այլ ազգության, հարկավոր է մտածել ինքնությունը պաշտպանելու համար, որովհետև այդ ինքնությանը մեծ վտանգներ կսպառնան, և ում պարտականությունն է հասկանալ այդ վտանգը և նրա առաջն առնել, եթե ոչ այն խավին, որ իրեն ուսյալ կկանչե...»: Այս մտքերը մեկ անգամ ևս խոսում է մեծ հայրենասերի ազգապահպան, հայի ինքնության մասին խորհող, հայի գենը շարունակող, պատասխանատվություն ստանձնած երիտասարդի մասին: Նորից անդրադառնում է «Սաթենին», թե ինչու չի գրում հայերեն. «Ինձ համար քո հայերեն սխալը բիրապատիկ անելի սիրելի է, քան ռուսերէն ուղիղը» (ՀՊԹ, նգպֆ, մմ 17543/149, ք/մ 321/4, 2)... մտքերը կարդում ենք 1888թ. սեպտեմբերի 13-ին Պետերբուրգից Թիֆլիս գրված նամակում:

Որոշ նամակներում զգացվում է բնավորության վճռական գծերը, որը դրսևորվել է հատկապես իր ամուսնությանը՝ ապագային վերաբերող հարցին: Նրա վրա բացասական էր ազդել իր և Սաթենի հայրերի որոշումները ոչ ի նպաստ իրենց

ծրագրերի: Նա գտնում էր, որ եկել է պահանջելու ժամանակը..., որ հարցին կտրական որոշում պետք է տալ, չնայելով բոլոր խոչընդոտներին, կայացնել որոշում՝ միավորվելու 1889թ. ամռանը: Նորից երիտասարդ Հովհաննեսի մեջ արթնանում է գրողը, թարգմանիչը, ազատության, անկախության գնահատանքը, գրական աշխարհը: Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ: Մեծ ցանկություն ունի «Սաթենի» հետ միասին գնալ Փարիզ, վայելել այնտեղի ազատությունը, դառնալ ազատ քաղաքացի և երբեք չվերադառնալ Ռուսաստան, այդ «ստրկության» երկիրը: Ավելացնում է, որ «Սաթենին» կսովորեցնի ֆրանսերեն, այդ պատճառով ուզում էր Շեքսպիրը գնել ֆրանսերեն թարգմանությամբ և նվիրել նրան: Պահանջում է և գրում, որ երջանիկ կլինի, երբ իր ծննդյան օրը կարդա «Սաթենից» հայերենով գրված երկտողը: Հաջորդ անձնական բնույթի նամակներից պարզ է դառնում, որ Հ. Քաջագնունու և Սաթենիկ Միրիմանովայի ամուսնությունը կայացել է 1889թ. օգոստոսի 26-ին (մմ17543/149, ք/մ 321): Տարված գրական հակումներով՝ մի նամակում նշում է, որ կնոջ համար գնել է Լեոնտովի տարբեր հրատարակությունների գրքեր, տվել է կազմելու: Կա հիշատակում, որ պահում է գրառումների տետր հետևյալ խորագրով՝ «Իմաստուններ և հիմարներ», կամ «Գիտուններ և հիմարներ»: Մտադիր է Սաթենիկի անունով գրվել «Вестник инаностранной литературы» ամսագիրը, որտեղ հրատարակվում էր եվրոպական ընտիր գործեր: Խիստ անձնական բնույթի նամակներին չանդրադառնալով, հետաքրքիր մի միտք չեմ կարող չառանձնացնել: Քաջագնունին այնքան էր տարված Շեքսպիրով, որ գրում է. «մի գիշեր ես այնքան հափշտակվեցա նրանով, որ մի նամակ գրեցի նրան այն աշխարհը» (1891թ. հոկտեմբերի 14, ՀՊԹ, ք/մ 321/5, 3): Շեքսպիրով ապրող մեր գրողը, Շեքսպիրին անդրադարձել է իր գիտաքննադատական, գիտաբանասիրական մի հոդվածում, որը պատրաստվում էր ցույց տալ գրաքննադատ Միխայիլովսկուն և լսել նրա կարծիքը: Այս հոդվածում նրա մտնեցումն այլ էր. ցանկանում էր պատկերել, նկարագրել, ոչ թե բացատրել ինչպես են ստեղծվել նրա անմահ դրամաները, և այդ բոլորը մեկնաբանել ընթերցողների տեսակետից: Խոստովանում է, որ սերը դեպի Շեքսպիր գնալով ավելի է ուժեղանում: Շեքսպիրը մշտապես նրա ուսումնասիրման առարկան է եղել, իսկ Շեքսպիրին նվիրված նրա հոդվածները մեծ հետաքրքրություն են ներկայացրել մասնագետների շրջանում: 1892թ. հունվարի 22-ին (ՀՊԹ, ք/մ 321/2, 2) գրված նամակում կարդում ենք, որ տարիներ անց Վանում Քաջագնունին դասախոսություն է կարդացել Շեքսպիրի մասին և զուգահեռաբար ուսումնասիրել ու թարգմանել է քրդական բանահյուսությունը: Իր ճանապարհորդական նոթերում (Качазнуни 1911, 116) նա Շեքսպիրին համեմատում է իտալացի քանդակագործ, գեղանկարիչ, ճարտարապետ Միքելանջելո Բուոնարոտտիի հետ. «Շեքսպիրը՝ կյանք է, շարժում, ներկեր, անսպասելիություն, հրաշքներ, Բուոնարոտտին՝ գաղափար, միտք, տեսիլք, նախագծեր, խիստ, մեծաշուք, ցնցող: Ի վերջո հանգում է հետևյալ մտքին՝ Շեքսպիրը խորություն է և տարածություն, Բուոնարոտտին՝ խորություն և բարձրություն» (Качазнуни 1911, 117):

Այսպիսով՝ վերը բերված նամակներից կարելի է հետևեցնել, որ երիտասարդ Հ. Քաջագնունին ունեցել է գրական-գեղարվեստական հակումներ և ապագա

կնոջը սիրահարված լինելու հանգամանքով՝ կարծես ցանկացել է գրող դառնալ: Նյութերից կարելի է նկատել, որ, մի տեսակ, մրցակցություն է եղել Հ. Քաջազունի գրողի և Քաջազունի ճարտարապետի միջև: Ի վերջո, հաղթանակել է ճարտարապետի կոչումը:

Քաջազունու հասարակական և մասնագիտական գործունեությունը

Քաջազունու կյանքի փուլերում կարևորում ենք նրա հասարակական և մասնագիտական գործունեությունը: Որպես ճարտարապետ նրա մասնագիտական գործունեությանը ընթերցողը ծանոթ է Լ. Դուլուխանյանի 1997 թ. հրատարակված «Հովհաննես Քաջազունին՝ ճարտարապետ» գրքույկից, սակայն որոշ նամակներ մեզ հավելյալ մանրամասներ են հաղորդում այդ բնագավառից: Իր հասարակական գործունեության մասին նա «Սաթենին» ներկայացնում է Պետերբուրգի հայ ուսանողական հավաքները, իր կազմակերպած հայկական երեկույթի ծրագրերը, հրավիրված հյուրերին՝ տեղ տալով հայ գործիչներին, ինչու ոչ, խոսելով նաև ձեռք բերած եկամտի մասին, որի մեծ մասը ծախսում է գրքերի վրա: «Պետերբուրգում գործուն մասնակցություն յեմ ունեցել ուսանողական յելույթներում (այսպես կոչված անկարգություններում), աղմկել եմ ու մի քիչ էլ ծեծվել: Նույն Պետերբուրգում ուսանող ժամանակս տարվել եմ Տաճկահայաստանի ազատագրման գաղափարով, անդամ եմ եղել մի սակավաթիվ ստորհատակյա (ընդհատակյա) խմբակցութեան, որը ծրագրում էր, մասամբ էլ փորձում էր իրագործել զինված ապստամբություն» (ՀՊԹ, ք/մ 321/3, 2ա): Հետագայում ներկայացրել է Ս. Կուկունյանի արշավանքը, որպես զինված պայքարի նոր փուլ: Գրում է, որ սպասվում է ուսանողների լավագույն աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված իրենց ինստիտուտի 25-ամյա գործունեությանը, կարծում է, որ իր աշխատանքները անպայման կլինեն այնտեղ: Նախորդ տարվա Հ. Քաջազունու գծագրերը⁴ հայկական ճարտարապետության վերաբերյալ արժանացել են այդ պատվին: Զբաղված է նաև մի կարևոր աշխատանքով՝ «Կայարանի» մեծ նախագծով: Ներկայացրած նախագծում՝ Ճակատային մասի և առանձին ճարտարապետական մասերի համար ստացել է գերազանց: Ծանոթանում ենք պրոֆ. Շրետերի հետ կապված մի դեպքի մասին, ով չէր հավատացել, որ կամարների վերևում վիշապները նկարել է Հ. Քաջազունին: Գրում է, թե ինչպես Հ. Քաջազունին ողջ կուրսի ներկայությամբ ապացուցել է իր ճիշտ լինելը, պրոֆետորը բոլորի ներկայությամբ ներողություն է խնդրել, բայց ինչից հետո նախագծի համար հանձնաժողովը, որի անդամներից էր Շրետերը, նրան գնահատել են անարդար՝ 4: Հ. Քաջազունին որոշել է խնդրել ինստիտուտի խորհրդին նորից գնահատել իր նախագիծը: (Նամակը թվագրված է 1892 թ. 4 փետրվար Պետերբուրգից՝ Ախալքալաք):

Հ. Քաջազունու 1892 թ. փետրվար 15-ից մինչև դեկտեմբեր գրված նամակների (ՀՊԹ, ք/մ 321/3) մի մասը ընտանեկան բնույթի են. փետրվարի 11-ին ծսվել է տղան՝ Արամը: Այստեղ առկա են սիրող հոր և ամուսնու անհանգստությունները,

⁴ Հայկական ճարտարապետությանը նվիրված նրա նկարները 1891 թ. ցուցադրվեցին ուսանողների լավագույն նկարների ցուցահանդեսում:

ապրումները, ապագայի երազանքները, երեխաների դաստիարակության հարցերը և այլն: Հետաքրքիր է այն խոստովանությունը, որ կարդում ենք, ինքը երջանիկ աստղի տակ է ծնվել՝ ցանկությունները կատարվում են: Հունիսի 1–2-ը հույս է հայտնում լինել «Սաթենի» մոտ և վայելեն իրենց արձակուրդը: Հաջորդ մասը վերաբերում է իր մասնագիտությանը՝ ճարտարապետին, և իր ծրագրերին: «Ավելի ուրախալի է այն, որ այժմ ես սկսել եմ սիրել ճարտարապետությունը և հետաքրքրվել նրանով» (ՀՊԹ, ք/մ 321/5): Գրում է, որ ամռանը 1892 թ. ուզում է փոքրիկ ճանապարհորդություն կազմակերպել Անի. «Այդ ճանապարհորդությունը ինձ համար մեծ նշանակություն կարող է ունենալ» (ՀՊԹ, ք/մ 321/5, 4): Աշխատանքը դրվելու է մրցույթի: 5-րդ կուրսում ներկայացնելու են 2 ճարտարապետական ծրագիր՝ մեկը կլինի ռուսական, մյուսը՝ կան բյուզանդական, կան հայկական ոճով, ինքը նախընտրում է վերցնել հայկականը: Կարծում է կիաջողի, չնայած հայ ճարտարապետությունը քիչ է մշակված, գրականությունը շատ աղքատ է, սակայն կիաջողի նա, ով տիրապետում է նյութին: Իրեն երկու շաբաթ է հարկավոր հում նյութեր հավաքել... «Անիի մեջ այնքան նյութ, որքան ես ենթադրում եմ հավաքել, կարող եմ հավակնել, եթե ոչ ոսկե, գունե արծաթե մեդալի»: Մյուս կողմից մտադիր է (եթե ենթադրյալ ճանապարհորդությունը հաջողվի) ճեմարանում մի դասախոսություն կազմակերպել հայոց ճարտարապետության մասին (ՀՊԹ, ք/մ 321/4), ինչը կբարձրացնի իր հարգը և կտա իր արդյունքը մեդալները բաժանելու հարցում: Իսկ որպեսզի իրագործվի այդ ցանկությունը, իրեն հարկավոր է լուսանկարչական սարք ունենալ: Նախընտրում է, որ կինը նամակը կարդա եղբոր՝ Վարդգեսի կամ տերտերի՝ հոր մոտ, գուցե կարողանան մի 50 ռուբլի ուղարկել սարքը գնելու համար: (Նամակը թվագրված է 1892 թ. մարտի 2, Պետերբուրգից Ախալքալաք):

1892 թ. մարտի 28-ին Ս. Պետերբուրգից կնոջը գրում է. «Այս րոպեիս վերադառնում եմ «Արաքս»⁵-ի խմբագրությունից զարմանում ես երևի, գուցե կարծում էիր թե «Արաքսն» էլ նրա խմբագրությունը, մեծահռչակ Սիմոն Գուլամիրյանն էլ, բոլորը վաղուց մեռել են, ո՛չ, ծխարանը կենդանի է»: Նշում է Ս. Գուլամիրյանի աշխատասիրությունը, ափսոսում, որ Վարդգեսը չկարողացավ տեր կանգնել հանդեսին և ավելացնում, որ «Ես եթե ուրիշ գործեր չունենայի, եթե կարող լինեի մնալ Պետերբուրգում, անպատճառ կանեի այդ...» (ՀՊԹ, ք/մ 321/5, 5ա): Շարունակում է, որ «Արաքս»-ի այս տարվա համարում կտպվի իր «Կուշտ պարոններին» հոդվածը, եթե ժամանակ ունենա թարգմանելու, նաև «Շեքսպիրը և նրա պոեզիան» հոդվածը: Քաջագունին նկարագրում է մի մարդու, ով միշտ լինում էր խմբագրությունում՝ ոմն Նիկողոսյան հայտնի հրապարակախոսին, որից նա խորշում էր և այդ խորշանքը երկու կողմից էր, (նշում է, որ ձեռնափայտը հատուկ վերցնում էր, որ պետք գալուց օգտագործեր այդ մարդու վրա) և երբ ինքը եղել է խմբագրությունում, այս մարդը արագ դուրս է եկել: Սակայն մի օր, երբ Հ. Քաջագունին Ս. Գուլամիրյանի համար կարդում էր իր «Կուշտ պարոններին» հոդվածը, ներս է մտել

⁵ Արաքս – գրական և գեղարուեստական պատկերազարդ հանդես, Սանկտ-Պետերբուրգ, տպարան Յ.Ի. Լիբերմանի, խմբ.-հրատարակիչ՝ Սիմեոն Գուլամիրեանց, 1892:

Նիկողոսյանը, ով մինչև դուրս գալը լսել է մի քանի պարբերություն հողվածից և հրապուրվել ու լսել մինչև վերջ: Այա մի քանի անգամ սեղմել է Հովհաննեսի ձեռքը, հիացական բացականչություններ, գովասանքներ արել, այդ օրվանից բարեկամացել են, չնայած համոզված էր որ «մոռտառ, անպիտան մարդ է»: Հետո, երբ հանդիպել են, խորհուրդ է տվել թքել հայ գրականության, հասարակության վրա, ասելով թե տգետ են, տաղանդներին չգիտեն գնահատել և պետք է նվիրվել ռուս գրականությանը՝ բերելով իր օրինակը: «Սաթեն ջան այսքան մանրամասն գրում եմ քեզ, որովհետև գիտեմ, որ դու կուրախանաս, բայց մի կարծիր թե այս գովասանքներից կորցրել եմ գլուխս... հողվածիս ոճը, բոլորովին նոր է, գոնե ես չեմ հիշում մի այդ տեսակ քննադատություն կարդացած լինեմ: Է՛ հոգնեցա, բավական է, ցտեսություն իմ սիրելի կինս:

Քո Օհաննես» (ՀՊԹ, մ/մ 17543, ք/մ 321/5, 2ա):

Խոսելով Քաջագունու գրական գործունեության մասին, անհնար է չնկատել գեղեցիկը գնահատելու, նրանով հրապուրվելու, հոգևորին մեծ տեղ տալու արվեստագետին բնորոշ հատկությունները: Դա երևում է 1892թ. ապրիլի 5-ին Ս. Պետերբուրգից Ախալքալաք՝Սաթենիկին ուղղված նամակում. «Քեզ համար ուղարկեցի այլքոմ հրաշալի նկարներով նոր կտակարանից, դա մի հավաքածու է երևելի նկարիչների պատկերներից: Շատ գեղեցիկ փորագրած: Կարծում եմ, որ քեզ մեծ բավականություն պիտի տամ, ես գոնե չէի կշտանում նայելուց: Թեև երեք օր մոտս էի պահել և միշտ նայում էի: Մի՛ կարծիր, թե դրանք դատարկ բաներ են, թե ավտոս է փողը, որ առել եմ այդ այլքոմը, թե դա միայն բուպեական զվարճության առարկա է: Ո՛չ, հավատա ինձ, որ այդպիսի բաների բարոյականը շատ մեծ է, և երբեք չպետք է խնայել փողը նման բաներ ձեռք բերելու համար: «Ոչ միայն հացիվ...» հոգին նույնպես ունի յուր պահանջները, նույնքան բնական, որքան և մարմնի պահանջները և հոգուն նույնպես պետք է կերակրել, դա միևնույն է, թե մի շատ լավ գիրք կարդաս, իսկ ինչ կարող է համեմատվել լավ գրքի հետ» (ՀՊԹ, ք/մ 321/5, 5ա): Արվեստագետին բնորոշ իմացական նրբությունները և գնահատանքը երևում է նաև նրա «110 օր Եվրոպայում» ճանապարհորդական նոթերում: Ինչպե՛ս է ընկալում կառույցների, գեղանկարների, եկեղեցիների, տաճարների հզորությունը, խորությունն ու նրբությունը: Քյոլնի տաճարի հետ հանդիպումը նրանից խլել էր անքուն մի գիշեր, լարվածություն, ինչ տպավորություն կգործի. լուսադեմին շտապում է տեսնել այն և ահավասիկ՝ «Հպարտ շինություն» այդպես է բնութագրել Քաջագունին: Գոթական, դասական ոճի կառուցված կաթոլիկ տաճարը, կասկած չկա, որ այն մեծագույն է, հզոր է, սակայն «նրանում ինչ որ բան պակասում է, կամ էլ ինչ-որ բանի ավելցուկ կա...» (Качазнухи 1911, 33) Եվ կարծում է, այստեղ կարող է օգտագործել «քարացած երաժշտություն» տերմինը:

Հետագա նամակներում հաճախ հանդիպում ենք Քաջագունի գրողի և Քաջագունի ճարտարապետի բախումները: 1893թ. հունվարին գրված նամակում ներկայացնում է Միխայլովսկու հետ հանդիպումը, նրա կարծիքը Շեքսպիրի քննադատական հողվածի մասին: Գրում է, որ ինքը Էդպիսի Յագոյի դեռ չէր հանդիպել, այնքան խորաթափանց, զրոյին հատուկ շրջահայացությամբ, լեզվի հմայքով և վերլուծաբար է ներկայացրել՝ հասկանալով մարդկային հոգու քաջությունը:

Մի քանի խորհուրդներից հետո Միխայլովսկին ձեռնադրել է նրան գրական ասպետ... Իսկ երբ «Փարոսը ծովի ժայռապատ ափին» աշխատանքի համար 33 հոգուց միայն 3-ն են արժանացել բարձր գնահատականի, որից մեկը եղել է Հ. Քաջագնունին, և նա իրենց կուրսի լավագույն ճարտարապետների շարքում էր, գրում է. «Ես սկսեցի հասկանալ ճարտարապետական արվեստը և շատ սիրեցի գործը: «...Ծառայության չեմ մտնի, կգամ Թիֆլիս, կպարապեմ մի կողմից գրականություն, մյուս կողմից՝ ճարտարապետություն» (ՀՊԹ, մմ 17543, ք/մ 321/6, 4): Մտադիր է լինել ճարտարապետ և ոչ ինժեներ, ուզում է որոշել, թե որ ճանապարհի վրա ինչ շինություններ պիտի լինեն:

Նորից անդրադառնալով հասարակական գործունեությանը, կարևորում ենք 1893 թ. մարտ-ապրիլին (ՀՊԹ, ք/մ 321/5-6, ա,բ,գ,դ) գրած նամակները Պետերբուրգից, ինչպես Գրիգոր Արծրունու ցավակցական հեռագիրը կազմելիս, արծաթյա պսակ պատվիրելը, այնպես էլ ուսանողական ժողովին առաջարկել է ուղերձ հղել Խրիմյան Հայրիկին, Ռուսաստանի հայ ուսանողության կողմից: Ուղերձի տեքստը հետևյալն էր՝ «Հայոց ազգի պաշտելի հայրիկ, համբուրում ենք սուրբ աջդ և ողջունում ենք ժողովրդի ընտրյալիդ լուսավորչա գահի վրա: Երջանիկ ենք, որ մեր առաջին քայլերը կյանքի ասպարեզում անելու ենք սիրալիր հովանավորությանդ տակ: Տա Աստված մեզ այնքան ուժ և արիություն, որ կարողանանք ապագայում մեր պաշտելի Հայրիկի հարազատ որդիք հանդիսանալ» (ՀՊԹ, ք/մ 321/6, 5գ): Ուղերձը առաջարկվել է փորագրել 2 արծաթյա թիթեղների վրա, որ պահպանվի Էջմիածնի թանգարանում, որպես պատմական գրություն: Այդ նպատակի համար անհրաժեշտ էր հավաքել 200–300 ռուբլի գումար: Առաջարկը միաձայն չի ընդունվել: Գրել են Մոսկվայի, Օդեսայի և Խարկովի հայ ուսանողներին, որ չհասպաղեն, ցանկություն կա, որ այն ներկայացնեն Հայրիկի օժան պահին: Հնչել են տարբեր կարծիքներ, որից Մոսկվայի ուսանողներն առաջարկել են ուղերձը ներկայացնել թղթի վրա, իսկ մնացած գումարով ժողովրդական գրադարան բացել Երևանում կամ Շուշիում: Քաջագնունին մտահոգ է, թե ինչ կապ ունի ուղերձը գրադարանի հետ և «ինչո՞ւ բարդացնել և դժվարացնել մեր պարզ և հեշտ գործը... Հիմա կսկսեն հազար ու մի դատողություններ, առաջարկություններ, նամակագրություններ և կենդանի գործը իսկույն կմեռնի, թղթի և թանաքի զոհ կդառնա»: Սկսվում է բաբելոնական խառնակությունը՝ Մոսկվայի ուսանողությունը համաձայն է «բայց...», Խարկովի ուսանողությունը համաձայն է «միայն...», Օդեսայի ուսանողությունը համաձայն է «սակայն...» «Պետերբուրգցիները՝ ...մենք ումի՞ց ենք պակաս..., եթե նրանք մեջ են ընկնում իրանց «բայց»-երով, «միայն»-ներով, ու «սակայն»-ներով: Մենք էլ մեր «այնուամենայնիվ»-ը կդնենք»: Գրում է, որ այս բաբելոնական խառնակության վախճանը զրո է, որ մինչ սրեն իրենց գրիչները, Հայրիկը, Աստոյ անհասանելի կամոք, գահ էլ կբարձրանա, իր կյանքի շրջանն էլ կը բոլորե և նույն Աստոյ նույն անհասանելի կամոք կը համբարնայ ի գոգն Աբրահամա... Այն ժամանակ մի կողմ կդնեն իրենց գրիչները և կասեն. «Ափսոս, որ Հայրիկը մի քիչ շտապով ի տեր հանգչի... եթե մի քիչ էլ սպասեր... ինչ գեղեցիկ ուղերձ պիտի ներկայացնեիրք» (ՀՊԹ, ք/մ 321/6, 5դ): Զարմանում է հայկական բնավորության վրա, գտնում է, որ որևէ հարց բոլորին չի կարող բավարարել, բա-

վական է, որ հիմքը համապատասխանի ընդհանուր տրամադրությանը, իսկ մանրամասների հետ պետք է հաշտվել, եթե ոչ, մտադրությունը երբեք չի իրագործվի:

Նամակներն ուսումնասիրելիս պարզ երևում են այն հատվածները, որտեղ ճարտարապետի խոսքն է. հայտնում է, որ ինժեներական նախագծերի պաշտպանությունը կայացել է, պաշտպանել է 3 նախագիծ՝ կանուրջների, ջրատար և ջրնուղ խողովակների համակարգերի մասին: Ստացել է քաղաքացիական ինժեների կոչում (ՀՊԹ, ք/մ 321/6, 6), որը տալիս է իրավունք կրելու բարձրագույն կոչման կրծքանշան: Քաջագնունին լավագույն ուսանողների շարքում էր, մեծ ապագա խոստացող ճարտարապետների շարքում: Հետագայում «Ինստիտուտը գերազանց ավարտելու կապակցությամբ (1895) Քաջագնունու անունը փորագրվեց ավանդական մարմարե տախտակի վրա» (ՀՊԹ, մմ 17543/150, ք/մ 322, 1): 1893թ. վերջին նա Բաքվում զբաղեցնում էր շինարարական վարչության բաժանմունքի գերհաստիքային տեխնիկի պաշտոնը: 1894թ. նամակները (ՀՊԹ, ք/մ 321/7, 1) գրում է Բաքվից՝ քանդվելու է եկեղեցու գմբեթը, նորը կառուցելու նպատակով: Ընտրվել է հանձնաժողով, որի անդամը նաև ինքն է, հույս ունի իրեն հանձնարարեն այդ աշխատանքը, իհարկե անվճար, ավելացնում է, որ դա ազգային գործ է: Մի «ամբողջ կոմիսիա է ընտրվել, որի անդամ լինելը ես էլ պատիվ ունիմ»: Նաև կարդացել է «Մշակ»-ի համարներից մեկում, որ հայտնի ֆրանսիացի գրող Պիեռ Լոտին⁶ ցանկանում է ճանապարհորդել Փոքր Ասիա և Պաղեստին և գիրք գրել այդ ճանապարհորդական տպավորությունների մասին: Մտադիր է նամակ գրել Լոտինին, եթե այցելելու է հայաբնակ նահանգներ, ինքը սիրով կընկերակցի նրան: Հաջորդ նամակներում՝ (17 հուլիս, 24 հուլիս) կարդում ենք, որ օգոստոսին կավարտի և կհանձնի Բաքվի հիվանդանոցի շինարարական աշխատանքները Ջրխեթադամասում: Հավանական է, որ իրեն ուղարկեն ճանապարհաշինության, խնդրել է Մարգարովին, որ իրեն գործուղեն Շամախի⁷, ոչ թե թաթերի⁸ գյուղերը: 1895թ. նամակները գրված են Բաթումից, հիմնականում ընտանեկան բնույթի են: 1897թ. (հիշեցնեմ, որ 1897-1899 Թիֆլիսում քաղաքային վարչությունում թաղամասի ճարտարապետ էր /Ս.Գ./) օգոստոսին գրված նամակում չէի կարող ուշադրություն չդարձնել մի հանգամանքի, որը նույնպես որակում է մարդուն. լինելով ճարտարապետ, ունենալով հատուկ ճաշակ այդ ասպարեզում, երբ Թիֆլիսում ընտրում են վարձով բնակարան՝ ամառանոցի համար, մանրամասնորեն կնոջը նկարագրում է այդ բնակարանը՝ ընդունարանին կից աշխատասենյակ շքեղ ոճով, նույն ոճով պատուհաններ և այս ամենը շատ նուրբ արտիստական գործ...: Ազնվականական բնակարան էր, բայց ոչ նոր, այլ հին հասկացողության, սակայն գիտեր, որ կինը այդքան էլ չէր սիրում այդ ոճը, նա նրբանկատորեն, հաշվի չառնելով իր ճաշակը, պատրաստ է, ենթարկվել կնոջ ճաշակին՝ բնակարանի ընտրության

⁶ Պիեռ Լոտի (Ժյուլիեն Վիո) ֆրանսիացի վիպասան, գրող, ռազմածովային սպա, նա հայտնի էր Ստամբուլի և օսմանյան մշակույթի իր ռոմանտիկ պատկերներով:

⁷ Շամախի՝ քաղաք ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունում, Շամախու շրջանի վարչական կենտրոն: 1916թ. այստեղ ապրել է ավելի քան 4,5 հազ. հայ: Գործել են տղաների և օրիորդաց /Ս. Սանդուխտյան/ ծխական դպրոցներ, Սր. Ասովաձաձին եկեղեցին:

⁸ Թաթեր – իրանախոս ազգություն Կովկասում, ապրում են Ադրբեջանի մերձկասպյան շրջաններում, Հարավային Դաղստանում, Իրանի հյուսիսում:

մեջ: 1899 թ. (1899–1906 Բաքվում նավթագործների համագումարի խորհրդում աշխատել է, որպես ավագ ինժեներ, ծավալել է աշխատանքներ Բալախանում, Սաբունչիում, Բիրի Էյբաթում): Իր ղեկավարությամբ և մասամբ անձնական հսկողությամբ կառուցվել է 42 կմ ճանապարհ, ջրանցքային ցանց նույն վայրերում, հիվանդանոցներ և հիվանդանոցային բարաքներ մոտ 15 հատ: Բաքվից՝ Թիֆլիս գրված նամակներում խոսվում է տարբեր նախագծերի մասին: Նախագծերի մեծ մասը պատրաստ է անձամբ իրագործել, անհրաժեշտ է միայն խորհրդի համաձայնությունը: Այստեղ արդեն Քաջագունու մեջ խոսում է համոզված, խստապահանջ ճարտարապետը: Նշում է, որ լրագրում տարածած լուրը Բաքվի եկեղեցու մասին կեղծ է, և մտածում է, որ այն գուցե վերաբերել է Բաթումի հայկական եկեղեցուն: Սակայն մրցույթը հայտարարված է, պետք է նորից անդրադառնա իր աշխատանքներին և վերապատրաստվի: Հաջորդ նամակներում, որոնց մեջ կան նաև անթվակիր նամակներ՝ գրված Բաքվից, Բալախանից, տարբեր մտքեր են ընտանիքի անդամների, նրանց հարազատների և ծանոթների մասին: Բալախանում նախագծել ու կառուցել է բնակելի տներ և հյուրանոցի շենք: «Քաջագունու թվով ոչ այնքան շատ գործերը արժեքավոր ժառանգություն են մեր ազգային մշակույթի համար: Գործեր, որոնց մեջ արտացոլվեցին ճարտարապետի աշխարհայացքը, գեղարվեստական մտածելակերպը, բարձր կուլտուրան...» (Դոլուխանյան 1997, 8) 1902 թ. փետրվարի 11-ի նամակում հայտնում է, իր մոտավոր երթուղու մասին՝ Փարիզ, Բրյուսել, Անտվերպեն, Ամստերդամ, Ռոտերդամ, Քյոլն, Նյուրնբերգ, Սյուն-խեն, Իտալիա: Իր ճանապարհորդական նոթերը կարևոր վերլուծություններ են տվյալ ժամանակահատվածի, ինչպես նաև ճարտարապետի հայացքով ընկալելու համաշխարհային գլուխգործոցներ համարվող շքեղ կառույցները: Հետագայում նա ավստում է, որ քերականությունն ունի ընդամենը 3 գերադրական աստիճաններ, ինչպես կարող է նա այդ ամենը տեղավորել այդ աստիճանների մեջ՝ Միքելանջելոյի Դավիթը, կամ Սբ. Պետրոսի տաճարը, կամ Փարիզի Աստվածամոր տաճարը (Качазнуни 1911, 117): Մինչ Փարիզի Աստվածամոր տաճարը տեսնելը, կարծում էր, որ այն Աստվածային, երկնային ստեղծագործություն է: Տեսնելուց հետո այն որակեց «մարդկային հնարք», սակայն քիչ-քիչ այնպես սիրահարվեց, որ ամեն օր լինում էր տաճարում, ոտքերն անընդհատ փնտրում էին տաճարի ուղղությունը: Վերջին օրը մի պահ զգաց, որ ինքը լուռ աղոթում է առանց բառերի: Փետրվարի 15-ի նամակում (ՀՊԹ, ք/մ 321/8, 2) գրում է հայկական և մակեդոնական հարցին վերաբերող Փարիզում կայանալիք կոնֆերանսի մասին, որտեղ ելույթ են ունենալու Դենիս Քոչինը, Յորե Փրեսենսը, Փոլ Լեռոլը և ուրիշներ, այդ կապակցությամբ եղել են նաև միտինգներ: Իսկ մեկ այլ դահլիճում կլինի հայկական երեկույթ՝ ի նպաստ հայ որբերի, որտեղ կերգի եկեղեցու երգչախումբը:

Փարիզում Քաջագունունի նույնպես տալովորվել էր Ֆրանսիական Մեծ հեղափոխության կարգախոսով՝ «Ազատություն, Եղբայրություն, Հավասարություն», որը կարողում էր ամեն քայլափոխի, յուրաքանչյուր կառավարական հաստատության, կամ տների ճակատային մասերում, նույնիսկ մասնավոր հաստատությունների վրա, կարծես այն լինել պարտադիր զարդարանք... Այստեղ Քաջագունունի նույնպես է ճարտարապետի լուծման իր ձևը՝ «Եթե այդ կարգախոսի նշանակությունը այդ-

քան մեծ է, ուրեմն ինչո՞ւ այդ աստիճանի մանրանայ, պետք է կանգնեցնել մեծ, հզոր հուշարձան և նրա վրա ոսկե տառերով փորագրել այդ խոսքերը...» (Качазнунի 1911, 14): Հետագայում հայտնում է իր ուղևորության մասին՝ Քյոլն, Ֆրանկֆուրտ, Նյուրնբերգ, Մյունխեն, Իսպրուկ, Վերոնա, Վենետիկ, Կովկաս կվերադառնա Բաթումով: Իր մտորումների մասին՝ Վատիկանում տեսնելով Ռաֆայելի⁹ գործերը խոստովանում է, որ իր մոտ հանելուկ է մնացել, ինչպե՞ս, ինչ մոզական ուժով կարողացավ այդ տղան կարճ ժամանակում նկարչի մեծ համբավ ունենալ իտալական վերածննդի շրջանում: 1902թ. գրված նամակներն ուղարկված են Ամստերդամից, Մյունխենից, Վենետիկից, իսկ 1904թ. Բաքվից՝ Սաթենիկին գրված նամակներում զգուշացնում է սպասվող համաճարակի մասին՝ նոր բարաքներ են կառուցում, հները հարմարեցնում, նորոգում և այլն: 1905թ. Մոսկվայից կնոջը գրված նամակում, խոսում է քաղաքական անկայունության, ճանապարհների փակ լինելու, ապա անհանգստանում ընտանիքի անվտանգության համար, քանի որ փողոցներում անկարգություններ էին սկսվել: 1906թ.-ի նամակներում երևում է, որ որոշել է թողնել ծառայությունը, գնահատելով հասարակական աշխատանքը, հեռու չմնալ հասարակական գործունեությունից, գտնում է, որ դա ապագայում իրեն կտա այն բարոյական բավարարությունը, առանց որի չի պատկերացնում իր կյանքը: Ապրիլ 19-ի (ՀՊԹ, Բ/մ 321/8) նամակում տալիս է բացատրություններ, ինչո՞ւ է ծառայությունից հրաժարվում: Նպատակահարմար եմ գտնում նամակից մի քանի պարբերություն մեջբերել. «Այս ետուն մեծ հույսերով և սպառնացող փոթորիկներով լի ժամանակներում հնարավորություն կունենաս նետվելու կովի դաշտը, կանգնել թև-թևի իմ գաղափարակից զինվորների կողքին, կովել և հաղթել նրանց հետ միասին և այդ սրբազան կռիվ հաղթությունով նոր կյանքի դռներ բացել իմ երեխաների համար: Միթե այս միտքը քեզ չի հրապուրում, միթե քեզ չի տանջում այն, որ երբ քարերը լեզու առել, խոսում, բողբոջում, մարտնչում են, երբ թասիքը ճակատներին տղամարդիկ ռազմի շարքերն են ստվարացնում, վաղվա մեծ կովին պատրաստվելիս, երբ մարտի ահարկու փողերը կանչում են ի զեն, երբ փրփրում են ազատության կարմիր դրոշները, քո սեփական ամուսինը Բէյսկ ձորում խիժ է չափում և նավթահանների համար զեկուցումներ է պատրաստում: Թող սա երազ լինի, բայց այդ երազը մեծ է և սուրբ, և վայ նրանց, որոնք միայն հեզնական ժպիտով կընդունեն այդ երազները: Թող որ ես հուսալսաբ լինեմ, թող որ իրականությունը ցույց տա իմ սեփական թուլությունը և փոքրությունը, այդ վեհ ճանապարհին, – թող, ես գոնե գիտենամ, որ փոքր էի և անզոր, բայց ոչ մեռած... թող մեկ տարուց հետո քաղցի սպառնալիքը ինձ կյանքի վերադարձնի պրոզային, թող նորից մտցնի նույն լծի տակ... այդ մի տարին մեր Հորդանանն է, որի մեջ մենք նոր մկրտություն պիտի առնենք և որից դուրս պիտի գանք թարմացած և մաքրված նոր կյանքի համար. – ինչո՞ւ թունավորենք մեր այս օրերը՝ կյանքի և աշխատանքի իսկական կենարար աշխատանքի օրերը ապագայի վախերով...» (ՀՊԹ, Բ/մ 321/9, 2): Տողերից պարզ է դառնում նրա հասարակա-

⁹ Ռաֆայել Սանտի, Բարձր Վերածննդի իտալացի նկարիչ, գրաֆիկ և ճարտարապետ: Իր կյանքի 37 տարիների ընթացքում ստեղծել է 200 նկար: Առաջինն էր, որ Աստվածածնի պատկերին քնքշություն հաղորդեց:

կան և քաղաքական կյանքի մեջ մխրճվելու բուռն ցանկությունը, և այդ լարված օրերին Քաջագունին չէր կարող մնալ դիտորդի կարգավիճակում: Իսկ մեկ այլ տողերում կարդում ենք հետաքրքիր և հեռուն ուրվագծող մտքեր, իր երեխաներին հայրենի հող ու ջրին կապելու, հայեցի դաստիարակելու, հայի գենը շարունակելու մեծ ցանկություն, դա պետք էր ներարկել նրանց մեջ ի սկզբանե: Այդ է պատճառը, որ ցանկությունն է ամռանը երեխաների հանգիստը կազմակերպել Սանահինում «...թող մեր երեխաները տեսնեն գյուղ, իսկական գյուղ, այն էլ հայկական և այնպիսի մի պատմական վայր, ինչպիսին է Սանահինը, լի հնության վեհ հիշատակներով, թող մեր երեխաները մի քանի ամիս շնչեն հայկական մաքուր օդը, մոտիկից տեսնեն հայ գյուղացուն, սիրեն հայկական լեռների գեղեցկությունը, շոշափեն փառավոր անցյալի բեկորները, իրենց մատաղ սրտերի մեջ դրոշմեն հայրենիքի սերը» (ՀՊԹ, ք/մ 321/6, 3): Որպես հոգատար հայր, սիրող ամուսին, մտահոգ քաղաքացի, ներշնչված իր հայրենիքի սիրով, բնությամբ, նրա պատմությամբ ու հնություններով, մեծ ցանկություն ունի ներդնել այս ամենն իր երեխաների մեջ, մեծացնել նրանց հայրենի երկրի շնչով: Հետագայում, որպես մտքի շարունակություն Մարգոյին ուղղված մի նամակում գրում է. «Ամեն մարդ պիտի ունենա իր հոգու խորքում մի Աստված ու մի պաշտամունք, ով չունի՝ նա վերջին աղքատն է: Նյութական ոչ մի բարօրություն չի կարող փոխարինել կամ լրացնել սրբության բացակայությունը: Ասում ես, որ ապագայում ամբոցներ չես կառուցում քեզ համար, պետք չեն ամբոցներ, դու մի փոքր տաճար կառուցիր քո սրտի մեջ և դրանով իսկ դու շատ հարուստ կլինես: Սովորիր, գիտությունը լավ բան է, բայց երբեք մի մոռանա, որ ամեն մարդ ապրելիս սպառում է արժեքներ և այդ արժեքները սպառելու իրավունք ունենալու համար, պետք է ինքն էլ աշխատի արդյունաբերի փոխարժեքներ...» (ՀՊԹ, մմ 17543/141, ք/մ 313): Այս խորհմաստ մտքերը մշտապես ուղեցույց եղան իր երեխաներին՝ կյանքի լաբիրինթոսներում:

Բաքվից Թիֆլիս՝ Մաթենիկին 1906–1907 թթ. գրված նամակներում հիմնականում ճարտարապետի, մասնագետի մտորումներն են: «Հովհաննես Քաջագունին ճարտարապետական ասպարեզ մուտք գործեց 20-րդ դ. նախաշեմին: Դա մի ժամանակաշրջան էր... երբ աշխարհի կառուցողական արվեստում տեղի էին ունենում ռճական փոփոխություններ, կապված գիտատեխնիկական հեղաշրջման հետ: Ճարտարապետները որոնումների մեջ էին» (Դոլոխանյան 1997, 8): Երբեմն նույն ստեղծագործության մեջ կարելի էր հանդիպել տարբեր ոճերի զուգորդումներ: Հայ ճարտարապետները նույն ստեղծագործական մթնոլորտում էին և փորձում էին իրենց ուժերը տարբեր ոճերի մեջ: Սակայն տարիներ շարունակ Հ. Քաջագունին մշակել է հայկական եկեղեցու նախագիծը, որպես տրոճ մոնումենտալ շինություն ստեղծելու մեջ: Տարիների իր ցանկությունն իրականացավ, երբ սկսեց նախագծել հայկական եկեղեցին՝ Բաքվի կենտրոնում: Եկեղեցու կառուցման համար մեծահարուստ Բուդաղյանը կտակել էր իր միջոցները: Հայտարարվել էր նախագծերի մրցույթ: 1906 թ. սեպտեմբերի 25-ի նամակում գրում է Մաթենիկին. «Կիրակի օրը կատարվելու է եկեղեցու հիմքի օժան հանդեսը...»: «1907 թ. փետրվարի 28-ին մրցույթի ներկայացվեցին հինգ նախագիծ, մեկը Պետերբուրգից /լեհ ճարտարապետի/, երկրորդը՝ Գ. Տեր Միքելովի, երրորդը՝ Հովհաննես Քաջագուն-

նու նոթային նշանաբանով՝ «Փառք Քեզ, Տեր» չորրորդ և հինգերորդ հեղինակների ազգանունները մեզ հայտնի չեն: Բոլոր հինգ նախագծերը ուղարկվեցին Պետերբուրգ, ժյուրիի գնահատման» (ՀՊԹ, մմ 17543/149, ք/մ 321, 2):

1907 թ. հունիսի 4-ին ստացվել էր Պետերբուրգից ժյուրիի եզրակացությունը, որի համաձայն երկու նախագիծ ճանաչվել էին անբավարար, երեքը՝ Պետերբուրգի ճարտարապետի, Գ. Տեր-Միքելովի և Հ. Քաջազունունը բավարար, մրցանակը բաժանված էր երկու նախագծերի միջև, իսկ Հ. Քաջազունունու նախագիծը մնացել էր մրցանակից դուրս:

1907 թ. հունիսի 5-ին հոգաբարձուների խորհուրդը պետերբուրգցու նախագիծը մերժել է: Ընտրության համար մնացել են Գ. Տեր-Միքելովի և Հ. Քաջազունունու նախագծերը: Գաղտնի քվեարկությամբ ձայները բաժանվել են՝ 5 ձայն հոգուտ Տեր-Միքելովի և 5-ը՝ հոգուտ Հ. Քաջազունունու նախագծի: Վճռում են նախագծի ընտրությունը հանձնարարել հանգուցյալ Բուդաղյանի կտակակատարներին՝ Բ.Մ. Դոլուխանովին, Ս. Այվազովին և Մելիքյանցին: Տարբեր ամսաթվերի նամակներում ներկայացված են Քաջազունունու անհանգստությունները մինչև մրցույթի վերջնական հաղթելը: Գրում է, որ իր դեմ է ամբողջ հոգևորականությունը՝ սևագլուխների մի մեծ բանակ...:

1907 թ. հունիսի 7-ին Բուդաղյանի կտակակատարները միաձայն ընտրել են Հ. Քաջազունունու նախագիծը: Եկեղեցու շինությունը հանձնարարվել է Հ. Քաջազունունուն: Ըստ նախագծի, շինության արժեքը որոշված էր 300.000 ռուբլի: Նախագիծն ընդունելուց հետո պարզվել է, որ շինության արժեքը սահմանված է 200–210 հազար ռուբլի (ՀՊԹ, մմ 17543/149, ք/մ 321, 6): Չդիպչելով նախագծի էությանը, Հովհ. Քաջազունին եկեղեցու չափերը փոքրացրել է, մասշտաբները փոխելով՝ 1000 մարդ, նախագծով նախատեսված 1500-ի փոխարեն:

1907 թ. օգոստոսի 2-ին Հ. Քաջազունին սկսել է Բաքու քաղաքի սբ. Թադևոս և Բարդուղիմեոս¹⁰ հայկական մայր եկեղեցու շինությունը, բայց այն թողել անավարտ, 1911 թ. վերջում, շինարարությունը չավարտած արտագաղթել է Ռուսաստանից, քանի որ գտնվում էր «Դաշնակցություն» կուսակցության դեմ բացված դատական գործի մեջ, շինությունն ավարտել է ճարտարապետ Ն.Գ. Բակը¹¹: Քաջազունին Ճարտարապետը, ով հոգով նաև քաղաքական գործիչ էր, 1908 թ. հուլիսի 15-ին Բաքվից Ախալքալաք կնոջը գրած ընտանեկան բնույթի սամակի վերջին պարբերությունում շնորհավորում է «...Օսմանյան նորածին Սահմանադրությունը, ինձ թվում է, թե նա ավելի կայուն և երկարակյաց պիտի լինի, քան վաղամեռիկ ռուսականը»: Այո, այդ Սահմանադրությունը ապագայի հանդեպ հույս էր արթնացրել հայ մտավորականների շրջանում, որը շատ շուտով պարզվեց խաբկանք էր...:

Շուտով Հ. Քաջազունին «Բաքու» թերթի մշտական թղթակիցն էր և ստորագրում էր Ռ. Իվանովիչ անվամբ (ՀՊԹ, մմ 17543/97, ք/մ 269, 3): 1910 թ. փետր-

¹⁰ Հետագայում՝ 1930-ականներին այն քանդել են, տեղում կառուցել Կոնսերվատորիայի շենքը, 3 տարի շարունակ քանդում էին, չէր քանդվում, ստիպված են եղել պայթեցնել, այնքան ամուր էր կառուցված:

¹¹ Նիկոլայ (Նիկողայոս) Գևորգի Բակ, հայ ճարտարապետ, աշխատել է Երևանում և Բաքվում: Հայաստանի ճարտարապետների միության անդամ (1942):

վարին նա իր մասին գրել է. «Իմ մասնագիտական աշխատանքներին զուգընթաց վարել յեմ գաղտնի կուսակցական և լեզալ հասարակական աշխատանքներ (Բազվա Մարդասիրական ընկերություն, դպրոցական հոգաբարձություն, թեմական խորհուրդ, գրական-գեղարվեստական կրուժոկ, Բազվա հրատարակչական ընկ. և այլն)... յենթարկված յեմ եղել խուզարկությունների, բայց առանց հետևանքի» (ՀՊԹ, մմ 17543/3, ք/մ 175, 85): «Բաքու» թերթում կարդում ենք հայտարարություն նրա «Հավերժ քաղաքում» թեմայով զեկուցման մասին, որը կարդացել է գրական-գեղարվեստական խմբակում: Զեկուցումներն աղմկալի հաջողություններով են ընթացել, մինչ այդ հանդես է եկել Ա. Ահարոնյանի «Դատապարտվածներ» հողվածի կապակցությամբ: 1910թ. սեպտեմբերի 2-ին նո. 199 թերթում հայտնվում են մի շարք հողվածներ, որոնք պարբերաբար տպագրվում են մինչև 1910թ. նոյեմբերի 27-ը, նո. 201, նո. 203, նո. 206, նո. 210, նո. 214, նո. 216, նո. 222, նո. 226, նո. 230, նո. 232, նո. 233 և այլ համարներում (ՀՊԹ, մմ 17543/160, ք/մ 332, 10), իսկ արդյունքում՝ մամուլի ակնարկները հրատարակվում են առանձին գրքով «110 օր Եվրոպայում» վերնագրով: Շուտով նա գրական-գեղարվեստական խմբակում կարդում է դասախոսություն՝ «Ռուսահայերի քնարերգությունը» թեմայով, որից հետո՝ զեկուցում, «Էտյուդներ Շեքսպիրյան պատկերասրահից» թեմայով: «Բաքու» թերթի էջերում՝ 4 հոկտեմբեր 1911թ., 5 հոկտ. 1911թ., 7 հոկտ. 1911թ. և 30 հոկտ. 1911թ. հայտնվում են հողվածներ (ՀՊԹ, մմ 17543/160, ք/մ 332, էջ 2-5), որոնք վերաբերում էին Հայաստանում կաթողիկոսի սպասվելիք ընտրություններին, այստեղ կան Հ. Քաջագունու ելույթները հատկապես Մ. Օրմանյանի պատրիարքի թեկնածության կապակցությամբ՝ տալով օբյեկտիվ մեկնաբանություններ: Կան հետաքրքիր, քննադատական մտքեր գրական-գեղարվեստական խմբակում Վ.Պ. Ֆրոլովի հետ «Նյութեր ռուսական դպրոցի բնութագրման մասին» թեմայով վարած հարցազրույցից: Այսպես, կարելի է շարունակել նրա ակտիվ կյանքի դրվագները՝ լինելով դատավարության ներքո: Խորհում ես, ինչպե՞ս կարող է մի մարդու մեջ այսքան կատարյալ իրար կողք-կողքի կանգնեն գրողը, կուսակցականը, ճարտարապետը, հասարակական-քաղաքական գործիչը, արվեստագետը, փիլիսոփան ինչպե՞ս կարող է լրացնելով մեկը մյուսին չխաթարել որևէ արժեք, այլ խորացնել և հստակեցնել յուրաքանչյուրն իր տեղում: 1911թ. դեկտեմբերի վերջին Հ. Քաջագունին հաստատվում է Փարիզում, հետո Մոնպելիեում, ապա Գենտում և Բրյուսելում: 1913թ. ամռանը Հ. Քաջագունին լքում է Եվրոպան և տեղափոխվում Վան: Հ. Քաջագունին այնտեղից փախավ Խորեն Դավիթի Միրիմանովի՝ կնոջ եղբոր անձնագրով և այնտեղ նա հայտնի էր այդ անվամբ: 1914թ. սեպտեմբերի վերջին Հ. Քաջագունին ուրիշի անձնագրով հաստեց սահմանը և հասավ Իզդիր, որտեղից ուղևորվեց Թիֆլիս և այնտեղ որոշ ժամանակ ապրում էր անլեզալ: 1915թ. սկզբին Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը ներում շնորհվեց, ինչի արդյունքում օրինականացավ նաև Հ. Քաջագունու վիճակը: Հետագայում նա բոստոնյան «Հայրենիք»¹² ամսագրում հանդես եկավ հողվածաշա-

¹² «Հայրենիք» ամսագիր 1962թ., տպագրվել է Քաջագունու նամակները Բուքրեշտից, Ռուսիայի, 1923թ. թիվ 11-12:

րով «Ազգ և հայրենիք» վերնագրի ներքո: Սակայն հողվածում որոշել ենք առայժմ չանդրադառնալ նրա քաղաքական գործունեությանը:

Խորեն Հարությունի Մելիքյանի վկայությամբ, ով Հ. Քաջազունու զարմիկն էր, Թիֆլիսի Մայրանում 1919 թ. Հ. Քաջազունու նախագծով կառուցվել է երկհարկանի շենք «Թեյարան» արաբական ոճով, որը հետագայում 1967 թ. (ՀՊԹ, մմ 17543/3, ք/մ 175, 32/3) քանդվել է փողոցն ընդլայնելու նպատակով: Խորհրդային իշխանության հաստատումից հետո սկսվել է նրա վտարանդիի կյանքը՝ Պարսկաստան, Բաղդատ, Բուրեյ, Եգիպտոս, Կոստանդնուպոլիս, Բուխարեստ (ՀՊԹ, ք/մ 175, 9), սակայն նա չէր կարող ապրել օտարության մեջ, ձգտում էր վերադառնալ հայրենիք: Ավելի հստակ կարելի է խոսել Հ. Քաջազունու մասին՝ որպես շինարար-ճարտարապետի, խորհրդային շրջանում: Հ. Քաջազունու բարձր պրոֆեսիոնալիզմը և խոր գիտելիքները կարող էին պետք գալ խորհրդային տարիներին: Այդ էր պատճառը, որ լրագրողի հարցին նա պատասխանել է. «Ես շատ ջերմ ցանկություն ունեմ աշխատելու Հայաստանի շինարարության մեջ իմ մասնագիտության ասպարեզում» (Խորհրդային Հայաստան 1925, 01.23, նո. 17): Հ. Քաջազունու բարձր պրոֆեսիոնալիզմը և խոր գիտելիքները պետք եկան կրթելու համալսարանական ուսանողների ճարտարապետների ու շինարարների առաջին սերունդը: «Դասավանդում էր «Շինարարական արվեստ», «Ճարտարապետական նախագծում» առարկաները» (Դոկուխանյան 1997, 13): 1925–27 թթ. նա ղեկավարել է Հայբամբակկոմի շինարարական բաժինը: Ըստ Հայբամբակկոմի տեխնիկական բաժնի քիմիկ ինժեներ Համայակ Մելիք-Աղամիրյանի տեղեկանքի Հ. Քաջազունու ղեկավարությամբ նախագծվել և կառուցվել են.

1. Երեվանի Բամբակագտիչ և Ձեթօճառ գործարանի բանվորների համար բանվորական ավաններ և այդ գործարանի պահեստային և ծառայողական շինություններ (ՀՊԹ, մմ 17543/3, ք/մ 175, 32/3, 4):
2. Հոկտեմբերյանում (այսօր Արմավիր)՝ նախկինում Սարդարապատ, կառուցվել են նո. 3 բամբակագտիչ գործարանի ավանը, նաև պահեստային և ծառայողական շինություններ:
3. Բնակելի շինություններ և պահեստներ բոլոր Հայբամբակկոմի առք ու վաճառքի հումքի կետերում:

Հ. Քաջազունին 1927–1931 թթ. աշխատում էր ՀՄԽՀ Պետպլանին առընթեր «ԵԿՕՍՕ» շինտեխնիկական կոմիտեում, որպես տեղակալ: 1928 թ. Երևանում լույս տեսավ շինարարական կառույցների ոռոս-հայերեն բառարան՝ 7500 բառակազմով, որի աշխատանքներում Հ. Քաջազունին ունեցավ իր անգնահատելի դերը: Բառարանի հեղինակներն էին Հր. Աճառյանը, Հայր. Զարգարյանը, Դ. Հակոբջանյանը, Հ. Քաջազունին, Ա. Տոնոյանը (ՀՊԹ, մմ 17543/3, ք/մ 175, 32/3, 5): 1930 թ. փետրվարին Քաջազունուն շտրեհեցին պրոֆեսորի կոչում՝ տեխնիկի դեկան Հ. Նավակատիկյանի ստորագրությամբ: 1932–37 թթ. նա զբաղեցնում էր ՀՄԽՀ-ի տնտեսության Ժողկոմխորհի գիտա-տեխնիկական խորհրդի գիտ. քարտուղարի պաշտոնը: Դուստրը՝ Մարգոն, գրում է, որ հայրը այդ ընթացքում նախագծային ինստիտուտներում չի աշխատել: Նախագծեր է արել պայմանագրային հիմունք-

ներով: Քաջագունին 1926 թ. մասնակցել է Երևանում Ժողովրդական տան հայտարարված մրցույթին: Նախագիծը չի պահպանվել: 1931 թ. վերանախագծել է Բերիայի անվան գյուղատնտեսական բարձրագույն կոմունիստական դպրոցի շենքը: 1935 թ. մարտ-ապրիլ ամիսներին նախագծել է Լենինական քաղաքում բնակելի և խանութի շենքերի նախագծեր, որոնք գտնվում էին Բուլվարնիի /Կիրովի փողոց/ և 27-րդ փողոցի անկյունում: Շենքը անկյունային է, նայում է Լենինի հրապարակին: 1930-ական թթ. Հ. Քաջագունին նախագծել է Ապարանի գործկոմի երկհարկանի շենքը, որտեղ տեղավորվել էր շրջգործկոմը, հյուրանոցը և ճաշարանը (ՀՊԹ, ք/մ 175, 32/3, 4): Հ. Քաջագունու նախագծի համաձայն կառուցվել են շենքեր նաև Վան քաղաքում: Բայց չունենալով այդ մասին հաստատող փաստաթղթեր, մենք դրանք չենք թվարկում և մեզ դրանք հասել են վանեցիների բանավոր պատմություններից: Մեր անդրադարձները նրա գործունեության այս փուլին թերևս փոքր մաս է պարունակում՝ հենվելով թանգարանում պահպանված նամակների վրա: Ըստ դատեր պատմաձի, Հ. Քաջագունու բնակարանի խուզարկության ժամանակ, նրա գրասենյակից առգրավվել էին փաստաթղթեր, գրքեր, լուսանկարներ, և գուցե դրանց մեջ կային շատ կարևոր նյութեր, որոնք պետք է լրացնեին մեզ «անծանոթ» Հ. Քաջագունու գործունեության ընդհանուր ներկայակերտ:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով Հ. Քաջագունու՝ ՀՊԹ-ում պահվող նամակները, գրությունները նրա կյանքի տարբեր փուլերում, որպես գրող, փիլիսոփա, հասարակական գործիչ, արվեստագետ, Ճարտարապետ, դասախոս, հանգում ենք հետևյալ եզրակացության: Հ. Քաջագունին որպես գրող իր գիտաքննադատական, բանասիրական հողվածներով կարևոր ներդրում է արել գրականության ասպարեզում, հատկապես շեքսպիրագիտության բնագավառում: Նա կիրառել է նոր մեթոդ վերլուծաբանական մտքի ասպարեզում՝ կերպարներին մոտենալով պատկերագրական, նկարագրական տեսանկյունից և ինչպես ինքն է խոստովանում՝ ընթերցողի տեսանկյունից: Որպես ճարտարապետ, արվեստագետ, դասախոս՝ ուսումնասիրելով նրա ներկայացրած ճարտարապետական արվեստին նվիրված գործերը, նախագծերը, դասախոսությունները, գալիս ենք այն եզրահանգման, որ Հ. Քաջագունուն կարելի է դասել նորագույն ժամանակաշրջանի ճարտարապետների շարքում, ով որդեգրել էր նոր ոճ՝ մոնումենտալ շինություն ստեղծելու մեջ: Նրա գործերը արժեքավոր ժառանգություն են մեր ազգային մշակույթի համար: Նրա մասին կարծիք են արտահայտել հանրապետության շինարարներ՝ Ա. Ադոմյանը, Կ. Դուլուխանյանը, ճարտարապետներ՝ Գ. Մուշեղյանը, Վ. Հարությունյանը և ուրիշներ: Ալ. Թամանյանը հաճախ է դիմել նրան ստանալու մասնագիտական եզրակացություն՝ հանրապետությունում կառուցվող այս կամ այն շենքի համար: Եթե նա իր մտքի պայծառությամբ, կոռ տրամաբանությամբ և հոգու թռիչքով կենտրոնանար մեկ մասնագիտության վրա, ապա կլինեք փայլուն այդ ասպարեզում, քանի որ յուրաքանչյուր բնագավառ ուսումնասիրում էր իր խորությամբ, վեր հանում խնդիրներ և առաջարկում նրանց լուծման ձևերը: Հողվածում

չենք անդրադարձել նրա քաղաքական կերպարին, թողնելով հետագային, բայց գործիչն ինքն այս բնագավառում մատնանշում է իր մի շարք թերությունները, սակայն դրանք էլ վերնագրում է, ոչ թե ֆաթալիզմ, այլ դետերմինիզմ անվամբ: Ձեռագիր նամակների մանրամասն ուսումնասիրությունը մեզ հնարավորությունը ընձեռեց հստակորեն ձևակերպել նաև նրա հասարակական գործունեությունը, որի խորքում թաքնված էր հայի ինքնությունը, ստեղծագործ միտքը: Ընթերցողը ծանոթացավ Հ. Քաջազունի գործչի՝ սովերում մնացած կերպարին, իսկ ամեն ինչից վեր այն արժեհամակարգին, որ կրում էր գործիչը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՉԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳԱԹ, Հ. Քաջազունու ֆոնդ, նո. 4212:

ՀՊԹ, 17543/3, ք/մ 175, 32/3, «По следам архитектора, гражданского инженера Ованеса Матевосовича (он же Рубен Иванович) Тер-Оганесянца Качазнуни.

ՀՊԹ, մմ 17543/141, ք/մ 313/:

ՀՊԹ, մմ 17543/160, ք/մ 332:

ՀՊԹ, մմ 17543/5, ք/մ 321/1-9:

ՀՊԹ, մմ 17543/5, ք/մ 322:

ՀՊԹ, մմ 17543/97, ք/մ 269:

ՀՊԹ, նգպֆ, մմ 17543/149, ք/մ 321/4:

ՀՊԹ, նգպֆ, նո. 17543/1-191:

ՀՊԹ, նգպֆ, նո. 17543/5, ք/մ 177:

ՀՊԹ, նգպֆ, նո. 17536/1-22:

ԳԱԼՍՅԱՆ 2007 – Գալստյան Ս., *Սահակ Թորոսյան՝ Հայաստանի առաջին հանրապետության Երևանի նահանգապետը*, Երևան, 2007:

ԴՈՒՆԻՒՄՆՅԱՆ 1997 – Դոլունյան Լ., *Հովհաննես Քաջազունին՝ ճարտարապետ*, Երևան, 1997:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1925 – Զրույց Հ. Քաջազունու հետ, «*Խորհրդային Հայաստան*», 1925, 23 հունվար, նո. 17:

ՄԻՆԱՍՅԱՆ 2013 – Մինասյան Է., *Հայաստանի երրորդ հանրապետության պարմնություն*, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

ԿԱՉԱՅՈՒՆԻ 1911 – Качазнуни О., *Сто десять дней в Европъ, из записной книжки туриста*, Баку, 1911.

Seda Galstyan

History Museum of Armenia

sedagalstyan@yahoo.com

SOME NEWLY DISCOVERED EPISODES FROM THE LIFE OF HOVHANNES KACHAZ-NOUNI (ACCORDING TO THE LETTERS STORED IN THE HMA)

Keywords: Hovhannes Katchaznuni, archive, letter, Satenik Mirimanyan, writer, architect, public figure

In 1996, the funds of the History Museum of Armenia (HMA) were replenished with the personal archive of the first Prime Minister of the First Republic of Armenia, Hovhannes Katchaznuni, which was donated to the museum by the Prime Minister's daughter, Margo Katchaznuni (about 1029 units of material). The personal archive was rich in photographs, documents, personal items, etc. However, the material for our research was Katchaznuni's

handwritten letters, sent to his wife, Satenik Mirimanyan. Since the reader is more or less familiar with Katchaznuni as a Prime Minister and political figure, we found it appropriate to also reveal Katchaznuni as a writer, philosopher, public figure, architect, and artist. A detailed study of the handwritten letters gave us the opportunity not only to identify the different stages of Katchaznuni's activity, but, first of all, to learn his type of "human," his value system, and his Armenian identity.

Седа Галстян

Музей истории Армении

sedagalstyan@yahoo.com

НЕКОТОРЫЕ НОВЫЕ ЭПИЗОДЫ ИЗ ЖИЗНИ ОВАНЕСА КАЧАЗНУНИ (ПО ПИСЬМАМ ХРАНЯЩИМСЯ В МИА)

Ключевые слова: Ованес Качазнуни, архив, письмо, Сатеник Мириманян, писатель, архитектор, общественный деятель

В 1996 г. фонды Музея истории Армении пополнились личным архивом первого премьер-министра Первой республики Армении Ованеса Качазнуни, который был подарен музеем дочерью премьер-министра – Марго Качазнуни (около 1029 единиц материала). Личный архив был богат фотографиями, документами, вещами и т.п., однако материалом для нашего исследования стало рукописные письма Качазнуни, отправленные жене – Сатеник Мириманяну. Так как читатель более-менее был знаком с Качазнуни, как премьер-министром и политическим деятелем, мы нашли целесообразным раскрыть также Качазнуни-писателя, философа, общественного деятеля, архитектора, деятеля искусств. Подробное изучение рукописных писем дало нам возможность не только выявить разные этапы деятельности Качазнуни, но в первую очередь – узнать его человеческие качества, его систему ценностей, армянскую идентичность.